

Մեհմէտ չորրորդից յետ՝ Թադաւորեցին Սիւլէյման Դ, և Ահմէտ Բ. սոցա ժամանակ արտաքին պատերազմները Գերմանացւոց և Վենետիկեցւոց դէմ շարունակվելով, գրաւեցին Օսմանեանց բոլոր ոյժը. Թադաւորական գոնձարանը շատ նեղ վիճակի մէջ ընկաւ, այնպէս, որ արքունեաց արծաթեղէնք անգամ հարկ եղաւ հալել դրամ ձուլելու համար: Պարզ է, որ այսպիսի ժամանակ կռաւորութիւնը ստիպված պիտի լինէր նորանոր հարկեր դնել ժողովրդի վերայ: Բացի սորանից պետութեան ոյժը քաշվելով Եւրոպա Գերմանացւոց դէմ, նորա Ասիական նահանգները անխնամ մնացին և նպաստեցին ապստամբաց և աւազակաց արձակ համարձակ գործելուն: Անզուսպ յափշտակիչներն էին և Թիւրքմէներն, որոնք մեծամեծ չարիքներ հասուցին Փոքր Ասիոյ բնակչաց: Սորա վերայ են ակնարկում վերջին երկու յիշատակարանք 1687 և 1688 թուականներ:

## Մ Ի Լ Տ Ո Ն

ԵՒ ՆՈՐԱ

• ԿՈՐՈՒՍՏ ԴՐԱԹՔԻ •

( Ըստ Տէնի )

( Շ-րոշ-ի-թիւն )

Ամէն մի խօսքից լաւ նկատում է, թէ խօսողն է՝ մի բողոքական ամուսին, մի հոգևոր հայր իւր կնոջ, Հետեւեալ օրը այց է գալիս հրեշտակը: Ադամը խնդրումէ Եւայից, որ ուտեստի պատրաստութիւն տեսնէ. նա էլ որպէս պատուական տանտիկին՝ պարծանքով թուում է իւր բանջարանոցի լիութիւնները և մի քանի բոպէ լաւ մտածում է, թէ արդեօք սեղանը ինչո՞վ զարդարէ. «Նա անտարակոյս կը խոստովանի, թէ Աստուած առատաձեռն բարութիւններ է շնորհել երկրին ևս նոյն չափով, ինչքան և երկնքին » \* ) : Ահա մի հիւրասէր քրիստոնէական հոգացողութիւններ: Աճապարանք դուրս է գնում հոգսերը դէմքի վերայ նկարուած, թէ արդեօք ո՞ր ընտրութիւնը լաւագոյն է, ի՞նչ կարգ պահպանուի, որպէս

\* ) Զի տեսեալ վկայեցէ՝ թէ և աստէն իսկ ընդ երկիր Լցեալ է Աստուծոյ զիւր բարութիւն որպէս յիշկինս:

զի ճաշակները չը խառնուին, կերակուրները աստիճանական վայելչութեամբ իրար յաջորդեն և յաջող ներհակութիւններով՝ ախորժակի գրգիռը մինչեւ վերջը աշխոյժ պահպանեն » 1)։ Նա պատրաստում է համեղ գինի, հասապտուղի օշարակ, սեր, ցանում է սեղանի տակը ծաղկի և տերեւի շնդջեր։ Անդուգական տանտիկին, եւ որքան քուէ կը վաստակէ դորա պատճառով գիւղի սկուպրերից Ագամը՝ երբ որ սա ուզենայ խորհրդարանի թեկնածու հանդիսանալ։ Ագամը ընդգիմադրական կուսակցութեան կողմնէ, նա է՝ վիգի, պուրիտանական, « Նա գնում է հրեշտակին հանդիպելու, ոչինչ ուղեկցութեան պէտք չունենալով՝ բայի սեփական իւր կատարելութիւններից, իւր մէջ է կրում նա իւր բոլոր ապարանքը և օստանիկը, որ աւելի շքեղագոյն է, քան արքայական ձանձրալի պերճութիւնը՝ սորա բոլոր սիրուն նժոյգներով, ոսկով զարդարած ծառաների երկայնաձիգ խմբերով » 2)։ Դուք տեսնում էք, որ վիպասանական քերթուածը քաղաքագիտական քերթուածի կերպարանք է ստանում և մենք ձեզ հետ, ընթերցող, իսկոյն լսեցինք իշխանութեան դէմ կծու սողերը։—Դրաք ողջոյններ ասելը փոքր ինչ ձգձըգուած է, բայց ամենեւին վտանգ չի սպառնում, թէ ճաշը կը սառչի » 3)։ Վասն զի բախտաւորապէս բոլոր կերակուրները թարմ պտուղներից և բանջարներից են կազմած (եփելու կարօտութիւն չը կայ)։ Հրեշտակը թէպէտ և եթերային էակ է, բայց և այնպէս ուտում է յաղթակազմ լինկօլնշէյրի կայուածատէրի պէս, « ոչ թէ աչքով միայն, կամ թէ հոտով, ինչպէս որ առ հասարակ աստուածաբանները հաւատացնում են, այլ ստոյգ սովածութեան սաստիկ ձեպով և քաջապէս մարսող ստամոքսի եռանդով, վասն զի աւելորդութիւնները զիւրաւ գոլորշիանում և ցնդւում էին հոգեւոր տարերքներից ստեղծած նորա մարմնից » 4)։ Եւան ճաշի ժամանակ լսում է

- 1) Զըմաղեալ ընկղմեալ ի հիւրասէր սրտին խորհուրդս,  
Ի՞բր ընտեսեց զփափկագոյնսն, կարգ զո՞ր կալցի՝ չխառնել զճաշակս,  
Եւ ի շար անվայելուչ միմեանց ըզկնի մի՛ արկանել։  
Այլ համոյ՝ համ քաղցրախորժ յաջորդեսցէ հեշտ փոփոխմամբ։
- 2) Նախահայրն յայնժամ ելեալ ի խորանէն գնայր ընդ առաջ  
Երկնաւոր հիւրոյն իւրոյ՝ սոսկ ուղեկցօք իւրով շնորհօքն։  
Ամենայն պերճութիւն արքայական էր յանձն իւր,  
Առաւել մեծահուգի քան զտաղտիլի հանդիսին շուք՝  
Զոր իշխանք ձգեն զկնի, մեծափարթամ երկնաձիգ  
Գունեք պարակից մանկլաւկաց ոսկեծամուկ ճաճանջելոց,  
Նժոյգք ի ձեռն հետաժարեալք, տեսողք ափշեալ բերանաբաց։
- 3) Ոչ բնաւ կասկածելով թէ ցրտասցին ինչ համադամբ։
- 4) Եւ հրեշտակն ոչ առ աչօք և ուրուապէս ինչ եկեր անդ  
Ըստ հասարակ աւանդից աստուածախօս բանարարաց,  
Այլ սաստիկ հապճեպով ըստոյգ քաղցի և ջերմութեամբ

Հրեշտակի պատմութիւնները, իսկ յետոյ աղանդերի (դեսերտի) ժամանակ՝ երբ որ խօսքը քաղաքականութեան է դառնում՝ խոհեմութեամբ հիռանում է։ Նորա օրինակին հետեւելով՝ անգլիական աիկիւնները կը սովորեն իրանց ամուսնու դէմքի գծագրութիւններից իմանալ, թէ « երբ նա մտադիր է շօշափել դժուարիմաց ուսումնական խնդիրներ » 1)։ Նոցա սեռը համեստաբար չէ յաւակնում այդպիսի խորութիւնների մէջ մտնել։ Խոհեմ կիներ « նախամեծար է համարում ամուսնու բացատրութիւնները » օտար մարդու բացատրութիւններից 2)։ Այս միջոցին Ադամը լսում է աստղաբաշխութեան մի համառօտ դաս, և իբրեւ գործնական անդլիացի, նա վերջապէս այն եղբակացութեան է հասնում, « թէ բարձրագոյն իմաստութիւնը այն է, որ մեզ շրջապատող հանապազօրեայ առարկաները և մերձաւորագոյն պիտոյքները ճանաչենք, իսկ մնացածը՝ դատարկ ունայնութիւն, կատարեալ խելայեղութիւն է, որով մենք կարեւոր բաների մէջ դառնում ենք անհմուտ, անփորձ և մեր անձի վերայ անվստահ » 3)։

Հրեշտակը այստեղից մեկնում է, իսկ Եւան իւր պարտիզի մէջ պակասութիւններ գտնելով՝ կամենում է մէջը մի քանի փոփոխութիւններ ձգել և առաջարկում է ամուսնուն, որ ձեռնարկեն նոր ձևի մշակութիւնը—ինքը մի ծայրից, իսկ նա միւս ծայրից, « Եւան, ասում է Ադամը հաւանութեան ժրպիտը երեսին, կնոջ առաջին զարդարանքն է տան բարօրութեան մասին հոգալ և ամուսնուն իրախոյս լինիլ, որ նա ժիր կերպով աշխատէ » 4)։ Բայց և այնպէս կնոջ մասին երկիւղներ է կրում և կուզենար նորան պահել իւր մօտ։ Կինը պռօշները ունցնում է, անձնապաստան հակառակութիւն արտայայտելով իւր դէմքի վերայ, ինչպէս մի նորահասակ մի (օրիորդ), որին հրամայում են մէնակ չըգնալ զբօսնելու։ Բայց և այնպէս նա իւր ուղեցածն է անում, գնում է մէնակ և . . . ուտում է խնձոր։ Ո՛հ, ընթերցողի վերայ այժմ թափվում են անվերջ ճառախօսութիւններ, և այնքան բազմաթիւ և այնպէս ցուրտ, ինչպէս որ են ձմեռային անձրևների տեղատա-

Ի հալել և փոխարկել, իսկ աւելորդն ինչ յայնցանէ

Դիւրածախ ընդ հոգիսն անցեալ ցնդեալ ի դուրս փչի։

1) Զի եմուտ յուսումնատենչ մտացաթիւ բարձանցն խոկս։

2) . . . . . զի յԱդամայ լուիցի միայն։

Պատմաբան նախամեծար քան զՀրեշտակն ընտրեալ զիւր պր։

5) . . . . . Առաջին յիմաստութեան

Ոչ լայնագոյնս է ճանաչել զմթին նրբինս առ ձեռն յոչ պէտս։

Այլ որ առ ոտս ինչ կայցէ ի կենցաղումս հանապազօր։

Այլք ծուխ են կամ սնոտիք, կամ խելայեղ բանդագուշանք,

Եւ անհմուտ ի կարեւորսն առնեն զմեզ և յարածուսիս։

4) . . . . . զի չիք ի կին ինչ սիրելի

Քան խնամոց ուշ ունել տան, և զայրն ի գործ բարեաց շարժել։

րափր, Այն ճառերը, որոնք Կրոմուէլի մութքաջնջած խորհրդարանի մէջ արտասանուել են, անշուշտ այդ աստիճան տաղտկալի և ծանրաբերձ չէին լինի, Խորամանկ օձը Եւայիսի փորձում և հրապուրում է տրամաբանական այնպիսի արուեստով և եզառածներին \*) այնպիսի ընտրանքով, որ կարող էր նոյն իսկ խիստ նրբաճաշակ Զիլլինգու սրտին պատիւ բերել, և իսպառ մըթնեցնում է կնոջ խղճուկ գլուխը՝ հաւաքաբանական մոելս ու ծխով, Գիտութեան ծառի առաջ կանգ առած՝ ասում է, « Աստուծոյ հրամայած արգելքը արդէն ապացոյց է այս պտուղի լաւ յատկութեանն, թէ սա այնպիսի բարիք ունի իւր մէջ, որ կարող է ուրիշին հաղորդել, մենք զուրկ ենք այդ բարիքից, վասն զի անծանօթ բարիքը սեպհականութիւն չէ, իսկ եթէ սեպհականութիւն էլ լինէր և տակաւին անյայտ մնար, այն ժամանակ մի և նոյն է թէ բնաւ չըլլինէր, « Եւայիսի հրաժարութիւնն չէ քաջել, Յայտնի նըկատվում է, որ Եւան Օքսֆորդի հոտ է քաշել, իրաւաբանական ներութիւնների վարժութիւն է ստացել Ցէմպլի ակումբներում և նուազ արժանի չէ դոկտորական դատկի, քան իւր ամուսինը:

Նրբազնինն քննախօսութեան հեղեղը ոչ մի բանի առաջ չի սանձահարւում. երկրաւոր գրախտից նա անցնում է բարձր սփիռները նորան դիմադրել չի կարողանում ոչ երկիր, ոչ երկինք, և ոչ նոյն իսկ դժոխքը:

Այն բոլոր նիւթերի մէջ՝ ինչ որ մարդ միայն ընդունակ է նկարագրել՝ անշուշտ ամենից ընտիրը եղել է և միշտ կըմնայ աստուածային գաղափարի կերպացումն. Բանաստեղծների նկարագրած աշխարհածնութիւնը կամ վսեմագոյն քերթուածները և միանգամայն քերթողի տաղանտը՝ այն ժամանակ միայն հասնում է կատարելութեան բարձր ծայրին, երբ որ նորա հոգու առաջ կենդանացած այդպիսի գաղափարները մինչի վախճան չեն թուլանում: Հնդիկների սրբազան քերթուածները, սուրբ Գրոց մարգարէութիւնները, Էդգան, Հեսիսդի և Հոմերի ոլիմպոսը, Դանտի տեսիլքները—այս ամենը պայծառ ծաղիկներ են, որոնք իրանց մէջ ամփոփում են ամբողջ քաղաքակրթութիւն իւր պէսպէս կողմերով. մեր սովորական յուզումը բոլոր-

\*) Երբ որ մի հաւաքաբանութիւն (սիլլոգիզմ) արտայայտվում է ոչ եռանդամ լիակատար ձևով՝ այլ երկանդամ համառօտ ձևով՝ նա կոչվում է եղանակ: Զոր օր. յաջորդ տողերում Եւայի ասած եզառածներից առաջինը այսպէս կարող է պարզուել. Պոռ-դը Բորէ է (ա.) որդէ-դէ որդէ-դէ է (բ.) ուր լռելեայն հասկանալ պէտք է մի անգամ ևս, (գ.) որ ինչ որդէ-դէ է Բորէ է: Ամբողջ հաւաքաբանութիւն է՝ ա) բ) գ) եզառած է՝ միայն ա) բ) \*\*)

\*) . . . . . Այլ նոյն իսկ սասան

Առաւել առնէ զպատիւդ՝ յայտ արարեալ զոր տառ բարիս,

Եւ զմեր իոկ պէտա անշուշտ չիք զանծանօթ ունել բարին,

Եւ եթէ ոք ունիցի և տակաւին անյայտ մնայցէ,

Այնպէս է, որպէս զի բնաւ ամենեւին իսկ ինչ չունել:

Երգելը այսպիսիք է իւրաքանչիւր հոգի . . .

ըովին տկարանում է այն շանթացայտ բորբոքման առաջ՝ որի զօրութեամբ որ նորա ըղիւնը են սքանչացած արտի խորութիւնից: Ապա ուրեմն միթէ անելի տխուր լան կարող է լինել, քան երբ որ այդ աղնուագոյն գաղափարը այն աստիճան ստորացնում են, որ նորան վայր են բերում և մի այնպիսի բանաձևի մէջ են սղմում, որի սահմանները ծրագրում է ռամիկ ժողովրդագետ մարմնաւոր առտուածպաշտութիւնը: Միթէ անելի մանր գաղափար կարելի է կազմել Աստուծոյ մասին, քան երբ որ նորան աշխատում են ձեւացնել ոչ այլապէս. բայց եթէ մի թագաւորի և մի մարդու կերպարանքի բոլոր մանրամասնութիւններով միթէ անելի զարհուրելի բան կարող է լինել, քան տգէտ իմաստակութեամբ և սուտ դպրութեամբ սահմանած խախտման Եահուէ, որի գործողութեանց ոչ մի քայլը չըպէտք է շեղուի այն ծրագրից, ինչ որ գծել է այդպիսի սոփեսաների դաւանութեամբ կազմած դասագրքի վերջին հրատարակութիւնը, որ բառացի անշուշտ մեկնութիւններով կոքի պէս քարացել արձան է դառնել, որ լոկ միայն փառաւոր անուն է կրում, ինչպէս հնութեանց թանգարանի մի հազուագիւտ իր:

Միլտոնի Եահուէն—մի պերճաշուք արքայ է, որ իրան պահում է պատուով ու վայելչութեամբ, ինչպէս ասես թէ Պարոյոս I - ը: Մենք առաջին անգամ նորան պատահում ենք երրորդ գրքում, երբ որ նա խորհրդարանի մէջ զեկուցանում է, Խօսուածքի հղանակից յայտնի նշմարուում է նորա սամուրի գեղեցիկ վերարկուն, Աւան - Դիկի ռճով կարճ չափերտաձև մօրուքը, թաւիշէ բաղկաթուր և ոսկեճամուկ ամպհովանին, զեկուցած խնդիրը վերաբերում է մի օրէնքին՝ որ գէշ հետեանքներ է ծնանում, և ահա նա կամենում է արդարացնել իւր կառավարութիւնը այդ կէտում: Ադամը վերջի վերջոյ կուտէ խնձորը. հապա ուրեմն ի՞նչ կարիք կայ ենթարկելու նորան մի այդպիսի փորձի: Օգոստոսփառ ատենախօսը հետեալ կերպով է դատում և ապացոյցներ մէջ բերում. «Ադամը կարող է ընդդէմ կենալ, բայց աղատ է նմանապէս ընկնելու: Այսպէս ստեղծել եմ բոլոր եթերալին զօրութիւններին, բոլոր հոգիներին, թէ նոցա՝ որոնք հաստատուն կացին, և թէ նոցա՝ որոնք ընկան, Ոմանք կացին՝ աղստ կամքով, ոմանք ընկան՝ նոյնպէս աղատ կամքով: Եթէ անձնիշխան չըլլինէին և գործէին ոչ թէ յօժար կամքով, այլ հարկաւ, էլ ինչո՞վ ապացուցանէին իրանց ճշմարիտ հնազանդութեան՝ անշէջ հաւատոյ և սիրոյ հաւատօթքը: Ել ինչո՞վ պէտք է կարողանային գովեստ վաստակել, եւ ես՝ ի՞նչ հաճութիւն ունենամ մի այնպիսի հլութիւնից, ուր կամքն ու բանականութիւնը (բանակաշնութիւնը նոյնպէս ընտրելու կարողութիւն է՝ որպէս զուր և ունայն կարողութիւններ, որպէս զուրկ ամենայն ազատութիւնից, որովք կրաւորական յատկութիւն դարձած՝ ծառային չէ թէ ինձ: այլ անհրաժեշտ հարկին: Պարզ է ուրեմն, որ նոքա այնպէս են ստեղծուած, ինչպէս որ արդարութիւնը պահանջում է, և արտնջելու տեղիք չունին ոչ իրանց ստեղծողի դէմ, ոչ իրանց բնութեան դէմ, ոչ իրանց ճակատագրի դէմ, բայց իրաւամբ պէտք է տրանջէին, եթէ նախասահմանութիւնը վարէր նոցա կամքը:

կամ եթէ անյեղլի օրէնքը և վերին կանխատեսութիւնը ուղղէր նոցա գործքերը, նոքա անձնիշխանաբար փորձում են իմ պատուիրաններին հակառակել, և ես նոցա վճիռների մէջ երբէք մասն և բաժին չունիմ, Իսկ եթէ կանխաւ գիտեմ նոցա անելիքը, այնու ամենայնիւ իմ նախատեսութիւնը ոչինչ ազդեցութիւն չի գործում նոցա մեղանշութեան վերայ, որ անշուշտ այն ժամանակ էլ կը կատարուէր, եթէ այդ նախատեսութիւնը բնաւ իսկ չը լինէր . . . Արդ, նոքա իրանց արարքների՝ իրանց դատողութիւնների՝ իրանց ընտրութիւնների ազատութիւնը ունենալով, նոքա մեղանշում են առանց որ և իցէ արտաքին բռնութեան՝ առանց ճակատագրութեան մի փոքր նշանի՝ առանց իմ նախատեսութեան ազդման \*): որովհետեւ մեր ժամանակի ընթերցողը այնքան համբերութիւն չունի, որքան որ թուի թէ ունին Աթոռները, սերտութենքը և իշխանութիւնները, ուստի և կիսով չափ կըրճատում ենք արքայական ճապաղութիւնները, Այս մի օրինակն էլ բաւական էր համոզուելու, թէ Միլտոնի Եահուէն — աստուածաբան Յակոբ ի նի զաւակն է, որ քաջ տեղեակ է արմինիականների և հոմաբականների վիճա-

\*) Ո՞ր իցե մեզ, եթէ ոչ՝ նմին և եթ . . . Ունէր յինէն . . .  
Բաւական ի կալ յաստուղ, թէ և գլորել կամակարող,  
Այսպէս իմ հաստեալ ողջոյն զգորութիւնս արփիածեմ  
Եւ զոգիս ամենայն, և որ կացինն և որ անկան,  
Կամակար կացին որ կանս, նոյն և անկան որ կանն անկեալ,  
Թէ չէին անձնիշխան, զի՞նչ ունէին նշան անխաբ  
Ի հանդէս սեռն և սերտ հնազանդութեան յանդիմանել,  
Անյողգողգ հաւատոցն և մտերիմ սիրոյն իւրեանց,  
Թէ հարկաւ գործէին, և ոչ կամաց յօժարութեամբ,  
Ո՞ր գովեստ մնայր նոցա, զո՞ր հաճութիւն գտանէի  
Թայնպիսում ես հլութեան, ուր կամք և միտք զուր և նանիր—  
Զի և միտք են ընտրութիւն—մերկ կողոպուտ հնազանդութեանցն,  
Երկողքին ընդ նուաճութեամբ՝ հարկին ծառայք էին, ոչ իմ,  
Թայս օրէնս հաստատեալք, որպէս արժանն էր և իրաւ,  
Չունին մեղ անսուտ զնել հասաչին իւրեանց կամ բնութեան,  
Կամ իւրեանց ճակատագրին, իբրու տիրեալ կամաց նոցա՝  
Վարեսցէ զայն հրաւիրանն իշխանաբար դատաւճռաւ,  
Կամ վերին անյեղլի կանխատեսութեամբ,  
Նոցուն է սահմանեալ զհետտութիւն իւրեանց, ոչ իմ,  
Թէ եղև յառաջատես, կանխաժաման իմ գիտութիւնս  
Ոչինչ ազդէ ի յանցանսն, որ թէ և չէր նախածանօթ՝  
Ոչ ընդ հատ ինչ և յայնժամ էր նա նոյնպէս անվրիպական,  
Արդ առանց ինչ գրգիւլոյ և կամ փոքու ստուգրի հարկին,  
Կամ բնաւ իմիք անվրէպ նախատեսութեանս՝ մեղանչին,  
Ինքեանք ինքեանց՝ և յոր դատինն և յոր ընտրեն՝ նախահաւակք,

բանական արուեստի, շատ ճարտար է *distinguo* (խորելու և որոշելու) տրամաբանական արուեստի մէջ, և ի լրումն ամենայնի՝ անօրինակ ձանձրալի է։ Այսպէս երկարածիք ծառեր լսել տալու համար՝ նա իւր պետական խորհրդականներին հարկաւ պէտք է վարձատրէ ահագին թոշակներով, Նորա որդին՝ որպէս մի թագաժառանգ՝ պալատական ակնածութեամբ պատասխանում է մի և նոյն եղանակով։ Ո՞չ ապաքէն այս աստուծոց—որ նոյն մի մարդ է գործադրադ, իմաստակ, հանդէսներ տիրող,—անհամեմատ բարձր է Դեօթէի աստուածը, այն կիսով չափ գերբնական գաղափարը, կիսով չափ հրաշապատում զրոյցը, պայծառատեսութեանց աղբիւրը, վերջապէս այն սքանչելի տեսիլքը՝ որ աներեցթ կերպով շրջում է բուրգի պէս կուտակուած ցնծական տաղերի բրգի մէջ 1)։ Գուցէ այնքան պատիւն էլ շատ էր Միլտոնի նկարագրած աստծուն, որ նորան վերագրեցինք)՝ նա աւելի նուաստ է, երբ որ Ռափայէլ հրեշտակապետին առաքում է Ադամին զգուշացնելու, թէ սատանան չարութիւն է նիւթում նորան։ «Թող յայտնի լինի նորան այս չարամտութիւնը, ասում է նա, որպէս զի երբ որ նա յօժարեալմ զեղծէ իմ պատուիրանը՝ այլ ևս չսկսէ արդարանալ, իբր թէ գործեց պատահմամբ, անզգաստութեամբ կամ անգիտութեամբ» 2)։ Այս դէպքում Միլտոնի աստուածը արդէն մի դպրոցական վարժապետի կերպարանքով է հանդիսանում, որ կանխաւ գուշակում է՝ թէ իւր աշակերտը քերականական սխալներ պիտի կուտակէ, ուստի և նոյնպէս կանխաւ նորան յիշեցնում է քերականութեան կանոնները, որպէս զի յետոյ զուարճութիւն ստանայ նորան խրատելու և պատժելու առանց ընդդիմախօսութեան։ Բայց իբրև քաջ քաղաքագէտ, նա այս անգամ մի ուրիշ դիտում ևս ունեցել է, որ և ուրիշ անգամ ևս արդէն իւր հրեշտակների նկատմամբ գործադրել է, այն է՝ «(այդպէս վարուեցաւ) ի նկատի առնելով այն վեհափառութիւնը, որ վայել է ծայրագոյն միահեծանին, որպէս զի իւր վեհ պատգամներն փայլ և շքեղութիւն ստանան, իսկ մեր մէջ կրթէ արագափոյթ հնազանդութիւն» 3)։ Էլ ինչ հեռու գնանք, դուք տեսնումէք, թէ ինչ է Միլտոնի երկինքը, դա՛ ոսկեզօծ զգեստներով ծառաների Ուայտհալլ է, Նորա մէջ հրեշտակները՝ պալատական երգեցիկներ են, որոնք պարտաւոր են ի պատիւ արքայի և ի ներկայութեան նորա մեղեդիներ երգել, «իրանց պաշտօնի մէջ են մնում» մինչև որ հլու հնազանդեն»։ Հերթապահութեամբ փոփոխուում են, որպէս զի ամբողջ գիշեր «օգնուագ երգոց հնչմունս և քաղցր օրհնութիւնս արձակեն զմեծ գահովն»։ Արդարև նախանձելի չէ այս խեղճ

\*) Քառաստի երկրորդ մասի վերջը, Նախերգանք երկնքի մէջ։

2) Ուսո՛ւ նմա զայս ամենայն. գուցէ կամաւ յանցուցեալ՝  
Պատճառեցի «նդ խաբս ինչ լինել» իբրև անաղղ և անզգաստ։

5) . . . . . Այլ զմեզ՝ ի հաստատել զվեհ պատգամն՝  
Առաքեաց իբրև արքայ միահեծան ի հրամանս իւր,  
Եւ ի կիրթ մեզ վարժութեան յերագափոյթ հնազանդութիւն։

Թագաւորի կեանքը՝ վասն զի միթէ պւելի դառն վիճակ կայ, քան մինչեւ որ յաւիտենականութիւնը շարունակ տեւում է՝ համբերատարութեամբ լսել իւր անձի մասին անլռելի ներքողներ 1)։ Չանձրութիւնը փարատելու համար՝ Միլտոնի աստուածը խորհում է իւր որդուն Թագաւոր պսակել կամ այս անսակ խաղերի վիճակից ունենալ (king-partner)։ Կարդացէք այդ կտորը և խղճով ասացէք, արդեօք դա հիշխնակի ժամանակաց հանդէսների մէկի ընթերինակութիւն չէ՞։ Ահա բոլոր զօրքերը շարուած են հրացանները ձեռքին, իւրաքանչիւրը իւր յատուկ տեղում՝ « մի դրօշակով՝ որի վերայ յանկուածի ձեռով նկարուած են իրանց ժրաշատակ և նախանձելի սիրազորութիւնները » 2)։—անտարակշյս մի որ և է հոլլանդական նաւի առումը կամ Սպանիացիների պարտութիւնը Դի-նեքի մօտ։ Արքան նոցա ներկայացնում է իւր « օծեալ » որդուն, հրապարակաւ հռչակում է նորան « աթոռակից իւր »։ « Թող երկնքի բոլոր հոգիք ծնկաչոք երկրպագեն սուրան »։ ով որ սորան չի հնազանդում, ինձ չի հնազանդում նա »։ և մի և նոյն օրը կարտաքսուի ապարանքից։— « Ամէնքը գոհ էին երևում, բայց իրապէս ամէնքը այդպէս չէին » 3)։ Այսու հանդերձ « նոքա ամբողջ օրը անցուցին երգով և պարով, իսկ պարելուց յետոյ ճոխ սեղանի նստեցան » 4)։ Միլտոնը նկարագրում է սեղանը, կերակուրները, բաժակները, գինիները։ Սա ճիշդ ժողովրդական տօնախմբութիւն է, ափսոս որ զբօսալի հրախաղութիւնը և զանգակների զողանջումը պակասում է։ Ինչպէս որ Լոնդոնումն է լինում, բայց մի թեթեւ հիմք կայ ենթադրելու, թէ այդ հանդիսին անշուշտ խմուել է արքայի կենաց բաժակը։ Սակայն սատանան դառնացրեց այս ընդհանուր ուրախութիւնը։ Նա իւր հպատակ զօրքերը՝ ինչպէս մի ուխ-

1) Այս յիշեցնում է Վոլթերի Իրաքսի պատմութիւնը, որ դատապարտուած էր անվերջ և անդադրում լսել չորս սենեկապահների գովասանութիւններ և այս երգած (կանտատ)։

Que son mérite est extrême!

Que de grâces, que de grandeur!

Ah! combien monseigneur!

Doit être content de lui-même!

2) Դրօշք և վառք յառաջապահս՝ ի վերջապահս ծածանեալք՝

Յայտ զդասս առնէին, զիշխանութիւնս և զաստիճանս,

Կամ յանկուածսն փողփողեալս նկարէին սուրբ յիշատակք,

Արարուածք նախանձաւորք և սիրաբունք, շքեղ աւանդ,

3) . . . . Հաւան թուեցան ընդ բանսն հանուրք։

Թուեցան առ հասարակ, սակայն չէին ամենեքին։

4) Անցուցին յերգս և ի պարս երեքսրբեան աթոռոյն շուրջ՝

Յեա պարուցն ցանկացան անմարմնականքն անոյշ ընթերցաց. . .

Ուսեն և ըմպեն, և ի համայրս ընտանութեան

Արքենան յումպ երկար՝ անմահութեամբ և խնդութեամբ։

տալիս Լամբերտ կամ Մոնկ՝ քաշեց տարաւ տարածութեան միւս ծագը, « Տիւսիսային բնագիտները » ( երեւի Շոտլանդիայ ) և անցաւ գեղեցիկ հրահանգութիւններով կառավարուող նահանգները և ընդ դասս հանուրց պետութեան » , որոնց մէջ վայելչապէս կարգուած էին սահմանած թուով շէրիֆներ և լորդ - լէյտնանտներ : Միլտոնի երկինքը տրոհուած և բաժանուած է ինչպէս մի մանրամասն աշխարհագրական քարտէզ : Սատանան իւր սպաների առաջ դատողութիւններ է անում միապետական իշխանութեան դէմ , խօսքերի մարտակուիւ է բաց անում Արդիէլի հետ՝ այս հատարիմ ըոյալիստի (Թագաւորական կուսակցի) հետ 1) , որը հերքում է « ստատանայի մոլեգնաճառ ապացոյցները » և հեռանում է այդ նշովիալ տեղից՝ իւր արքայի հետ միանալու . . . . . Օքսֆորդի՝ մէջ արգեօք , Իսկ նա զինուած ըմբոստը վեր է կենում իւր սըւնաւոր և գնդաձիգ զինուորներով , որ գնայ յարձակուի Աստուծոյ ամրակառոյց դղեակի վերայ 2) : Երկուստէք կոտորում են սրերով , իրար հարուածում են թնդանօթի ուրերով , փոխադարձ խլացնում են քաղաքագիտական դատողութիւններով : Այս տրամագին հրեշտակները՝ պրեսիտերեան (երիցական) բանակի ոգւով են հրահանգուած . նոքա իրանց պատանկութիւնը կորովացրել են հաւաքաբանութեան վարժութիւններով և դեռնտիր զօրականների մարզերով : Սատանայի ասածների մէջ պատահում են բողոքական քարոզչի ձեւեր . « Աստուած երեւցրեց իւր վրիպակութիւնը , ասում է նա . հետեւապէս եթէ մինչև այսօր նորան ամենագէտ էինք կարծում՝ այսուհետև անսխալ չը պէտք է համարենք նորան իւր խորհուրդներում և գուշակութիւններում » 3) : Նորաբերանից մինչև անգամ մի տասնապետ - մարդիկ զինուորական հրամաններ են սպրդում : Բացէք բացէք յառաջապահ , յաջ և յահեակ զձեր ձակատ : Նա այնպիսի ծանրաբերձ սրախօսութիւններ է արձակում , ինչպէս որ մի Գարրիսոնի սրախօսութիւնը կարող է լինել՝ որ սպանդագործութեան վի-

1) Արդիէլ ջերմագոյն ի պաշտօնն Աստուծոյ և հրամանացն կամարար . . . Եռութեաննեցաց հոյս ուխտապահ , յանհամար ի դրժագաւս անդ մի միայն հաւատարիմ :

2) Աստուած այնպէս ստորացուցած է Թագաւորի և մարդու գրութեան աստիճանի , որ ասում է ( Թէպէտ հեգնաբար ) հետեւեալ տեսակի տողեր .

Զի մի յանդգաստից ինչ կորուսցուք

Ըզբարձս մեր բարձրագահ , զգարիրայս և զլեռն մեր :

Իսկ նորա որդին , դեռահաս ասպետը , որ՝ առաջին անգամ պատերազմ պիտի գնայ , այսպիսի վերջաբանով է կնքում պատասխանը .

. . . . . Եւ արդեամբ ուռուցանել՝ կարող իցեմ՝ ընկձել զիսեռեալս ,

Բէ յետին որ յերկինս արժան իցէ զիս համարել :

3) Բայց չեղև ինչ դամագիտ . այսպէս Թուի ինձ այսուհետև ,

Երմաստ հանդերձեցոց՝ առ սխալոտս ունել զնա ,

Ուր զի ցայժմ՝ ընդհակառակս ամենագէտ էր կարծեցեալ :

ճակից սպայի աստիճանին է հասել 1)։ Եւ ի՞նչ երկինք է այդ երկինքը։ Այդ տեսակ դրախտը միայն խորշում պէտք է ազդէ, արժանանալ նորան— մի և նոյն է թէ մոնես Կարլոս 1-ի սպասեակների խումբը կամ Կրոմուէլի պատենագէտների (կիրասիր) գունդը, Դուք այս տեղ կը գտնէք հասարակ զօրանոցի բոլոր կարգերը, և աւուր պատուէր, և աստիճանների նուիրապետութիւն, և ամենախիստ ստորակարգութիւն, և բարձ և պատիւ, և բերդակալութեան պաշտօն 2)։ այլ և վիճաբանական մրցումներ, սահմանեալ հանգէսներ, ծնրադրութիւններ, մեծարանաց արքունական սովորութիւն, զէնքերի փայլ, զինանոց, պաշարեղէնի և վառօդի մթերանոցներ։ Միթէ արժէ՞ թողնել երկիրը, որ երկնքի մէջ էլ կրկին տեսնենք կառքեր, քարէ շէնքեր, հրետանի (թնդանօթ, գնտակ, վառօդ և այլն), վարչական կարգադրութիւններ, արքունական ծէսերի օրացոյց, ողջունելու արուեստի մարզութիւն, Միթէ այս ամենը գէթ հեռաւոր կերպով յիշեցնում է՝ Աստուծոյ սիրելեաց համար պատրաստած՝ այն անծանօթ 3) երանութիւնը, շէնքի ու երկնքի, և ունի ու չունի, և է ուր մարդը ունի (Ա. Կորն. Բ. 9)։ Ինչ սար ու ձորով է բաժանուած այս բոլոր միապետական մաշուած ցնցոտին՝ 4) Դանտի վեհ տեսիլքներից, տաշերի մէջ՝ իբր աստղեր՝ ի հեռուստ և ի վերուստ նկարուող հոգիներից, անմարմին ճաճանչումներից, խորհրդաւոր ձաղկկներից՝ որ կապուտակ տարածութեան մէջ յանկարծ շողում և կորչում են, այն անզգայի աշխարհից՝ ուր Երկրաւոր գոյութեան պայմանները կորցնում են իրանց զօրութիւնը, այն անիմանալի խոր վհից՝ ուր հազարներով լցուած են այնպիսի յուշկերևոյթ ուրուականներ՝ որոնք ցայտում և առ կայծում են երկնքի երկնք գոյներով, ինչպէս լուսաթափախ մեղունք՝ որոնք արեգական պայծառ լուսոյ հեղեղի մէջ յետ և առաջ ելնում են անում։ Արդեօք այս մի նշան չէ՞, թէ երկակայութիւնը աղօ-

1) Զոր օր, Դ. գրքում։

2) Զոր օր. Ռափայէլ հրեշտակապետի պահպանութեան պաշտօնը դրժոխքի դռների առաջ, նա խիստ ձանձրացեալ էր և շատ ուրախ էր երկինքը դառնալու։

3) Բայց ո՞ր բան, որ լեզու սրով բէականց գտցի բաւակ

Ձամենակալ Բարձրելոյն պատմաբանել զհրաշակերտս,

Կամ ո՞ր միտք մարդկեղէն իցեն ատակ զայն իմանալ։

4) Երբ որ Ռափայէլը երկիրն է իջնում, դրախտի առաջ պահպան կանգնած հրեշտակները նորան զէնքի նշանով տալիս են մեծարանաց ողջոյն։

Այս դրախտի անհաճոյ և յատուկ նշանը այն է, որ նա գլխաւորապէս կայ և պահպանուում է կոյր հնազանդութեամբ, և ոչ թէ՛ ինչպէս Դանտի մէջ է՝ սիրոյ զգացմամբ։

Իսկ և իսկ ծանեան զնա զօրք անմարմնոց պահակերաց,

Եւ ի շուք աստիճանին և պաշտաման մեծի՝ յարեան . . .

Բարեմասն մեր նսիհ, որպէս և ձերդ, ի հլուութեան կայ։

տանում է, թէ արձակաւանութեան դար է սկսում, թէ գործնական խելքը լոյս աշխարհք է գալիս և բնազանցութեան փոխարէն բարոյական խըրատ է արտադրում, Անկումը շատ խոր է, Որպէս զի այդ մասին ճիշդ գաղափար կազմենք, կարգանք իսկական քրիստոնէական քերթուած—Յովհաննու յայտնութիւնը, Ահա այն տեղից քաղած մի քանի տողով դատենք, թէ նա ի՞նչ կիրպարանք է ստացել նմանողի գրչի տակ.

Եւ դարձայ տեսանել զձայնն՝ որ խօսէր ցիս. և ի դառնալն իմում տեսի եօթն ճրագարան ոսկի:

Եւ ի մէջ եօթն ճրագարանացն նման որդւոյ մարդոյ, զգեցեալ պատմութեան պճշնաւոր, և գօտեւորեալ առ ստեամբքն գօտի ոսկեղէն:

Եւ գլուխ նորա և հերքն իբրեւ զասր սպիտակ՝ և որպէս զձիւն. և աչք նորա որպէս բոց հրոյ:

Եւ ոտք նորա նմանեալ պղնձոյ ծխելւոյ ի մէջ հնոցի հրաշէկ. և ձայն նորա իբրեւ զձայն քուրջ բազմաց:

Եւ ունէր յաջոյ ձեռին իւրում աստեղս եօթն, և ի բերանոյ նորա ելանէր սուր երկրերանեան. և երեսք նորա իբրեւ զարեգակն ճառագայթեալ երևէին:

Եւ իբրեւ տեսի զնա՝ անկայ առ ոտս նորա իբրեւ զմեռեալ . . .

Հաւաստեօք կարելի է ասել, թէ երբ որ Միլտոնը յօրինում էր *էքֆոյնիս զօրահանդէսն ու շքոյ սպասը*՝ նա ոչ անկաւ իբրեւ զմեռեալ:

Բայց եթէ տրամաբանական փաստարանութեան քնածին և միանգամայն ստացակոն սովորութիւնը՝ նշոյպէս և Միլտոնի ժամանակուայ աստուածաբանական ուղղութիւնը, այսինքն ամենայն բան նիւթապէս և բառացի կերպով մեկնելու հակում՝ թուլացրիցին նորա մէջ քնարերգական պատրանքը, կամ սքանչիլատեսութեան բուռն յափշտակութիւնը, այնու խափանեցին, որ նա սանդագործ է արփիական կենդանի հոգիներ, — ընդհակառակ նորա յաղթածաւալ ճոխ երևակայութիւնը՝ պուրիտանական կիրքերով բորբոքուած՝ կարողութիւն տուեց նորան հանդէս բերել դիւցազնական անձնաւորութիւն, ծնեց բազմաթիւ վսեմագոյն օրհնակութիւններ և անզուգական բնութեան տեսարաններ, Այս դրախտի ամենալնտիր մասը՝ դժոխքն է, և Միլտոնի աստուածապատում բանաստեղծութեան մէջ զլխաւոր դերը վիճակուել է չար ոգուն, Միջին դարերի խեղկատակ թզուկ դէւը, այդ եղջերաւոր այծ է ոտքերով կախարդը, լրբաբարոյ ծաղրածուն, ժանտ և աղտոտ կապիկը, պառաւ վհուկների գիշերացնութեանց պարագլուխը՝ այս տեղ հսկայ և դիւցազն է դարձել, Կրոմուէլի պէս պարտուած և պքսորած՝ պատկառանք և հնազանդութիւն է վայելում նա նոյն իսկ նոցա մէջ. որոնց որ ինքը գլորել է անդնդեան խորխորատը: Եթէ նա հրամանապետ է մընում, այդ այն պատճառով է, որ իրօք արժանի է իշխանութեան. նա անլի ինքնահաւակ, ձեռներեց, անյողդողդ է, անլի նրբութեամբ և ըմբռնում՝ քաղաքականութիւնը, քան ուրիշները. ամենայն խորամիտ խորհուրդ:

անակնկալ օգնութիւն, քաջագործ արարք՝ միշտ նորանից է ծագում: Նա երկնքում հնարեց հրաշէնը և կռուի երկրորդ օրը յաղթութիւն ևս տարաւ: Սի անգամ ընկղմած իւր զինուորութիւնը վերստին կազմակերպեց դժոխքի մէջ և խորհեց մարդու կորուստը, նա անցաւ խստիւ պահպանած դռների և անհուն անսահման վճի միջով, դիմացաւ հազար վտանգներին, յաղթեց ռուսաւոր խոչընդոտները, բայց և այնպէս վերջապէս ապստամբներէ մարդուն Աստուծոյ դէմ, և դժոխքին ընծայեց չարամէտ հպատակաց մի ամբողջ նոր ազգ: Թէ և պարտուած՝ բայց կարողանում է յաղթութիւնը իւր կողմը հակեցնել այնու, որ ամենաբարձր միահեծանից խլում է նորա հրեշտակների երրորդ մասը և գրեթէ Ադամի ամբողջ ցեղը, Թէ և վերջով խոցուած՝ բայց նա ցնծում է: որովհետեւ այն շանթը՝ որ հարուածեց նորա գլուխը՝ առաջուայ պէս անընկճելի թողեց նորա սիրտը, Թէ և յոգեբով ուսելի թող՝ նա աւելի բարձր է մնում հոգու կորովութեամբ, երբ որ տանջանքներով լի անկախութիւնը գերադասում է քան բախտաւոր ստորկութիւնը, երբ որ իւր պարտութեան և անասելի չարչարանքների վերայ նայում է որպէս փառքի՝ որպէս ազատութեան՝ որպէս երջանկութեան վերայ: Այս կրքերը՝ նոյն ընկճուած՝ բայց հաւատարիմ մնացած՝ Պուրիտականների տխուր և գուռոջ սրտերի քաղաքական կրքերն են: Ինքը Միլտոնը այդ ամենը կրել և զգացել էր պատերազմների փոփոխական բախտի ժամանակ, ինչպէս և այն գաղթականները՝ որոնք քան հին հայրենիքը Ամերիկայի յովազների և վայրենիների մէջ ապաստանութիւնը գերադասեցին՝ տակաւին անշէջ պահում էին իրանց սրտերի մէջ մի և նոյն բորբոքումն և զօրութիւնը:

«Այն է ուրեմն այն վայրը, այն ունջը և կլիման, որ այժմ երկնքի փոխարէն մեզ վիճակուել է. ուրեմն երկնաւոր լուսի փոխանակ՝ խաւար գիշեր՝ պէտք է մեզ պատէ, թող այդպէս լինի, քանի նա՝ որ այժմ հրամանապետ է՝ կամք և կարողութիւն ունի գործել և հրամայել այն, ինչ որ արդար դատէ: Որքան հեռու լինինք նորանից՝ այնքան մեղ համար աւելի լաւ է: Բանականութեամբ մենք նորան հաւասար ենք, և միայն բռնի զօրութեամբ յաղթուեցանք: Դուք ողջ մնացէք, երանեալ դաշտեր, ուր մշտապէս խնդրութիւն էր բնակում: Ողջոյն ձեզ այժմ, չարաշուք անգնդի արհաւիրքների, Իսկ դու դժոխք՝ անյատակ, պատրաստ կաց, նոր տանտէրդ գալիս է քեզ: Ասպնջական եղիր այն հոգուն՝ որին չեն փոխում ոչ տեղիք և ոչ ժամանակները: Միշտ հոգին ինքը իւր անձի բնակութիւն է կազմում, ուրեմն կարող է դժոխքը՝ երկինք դարձնել, երկնքը՝ դժոխք: Միթէ նոյն չէ՞ թէ ուր բնակեմ, եթէ միշտ անփոփոխ նոյնը մնամ ինչ որ արժան է. եթէ միշտ բաւական լինիմ անպակաս ամենայն զօրութիւններով, թէ և չբաւասարուիմ նորան՝ որին որ հարուածական շանթը ամենից բարձր է կացուցել: Գէթ ազատ կը լինինք այս տեղ, Ամենակալ Տէրը այն նպատակով չի ստեղծել դժոխքը, որ նախանձէ պոք բնակութեանը և մեղ միջից դուրս վռնտէ: Այս տեղ հանգիստ կարող ենք թագաւորել,—իսկ իմ

կարծիքով, մի աթոռ ունենալը՝ թէ և դժոխքի մէջ՝ նախանձելի վիճակ է։  
Եւ լաւն այն է՝ Թագաւորել դժոխքի մէջ, քան ծառայ լինել երկնքումս \*)։

Այս մտայլ գիւցաղնութիւնը, այս անդրգոյնի յամառութիւնը, այս կծու հեգնութիւնը, այս ոսկոր քարձած հպարտ ձեռքերը՝ որ իբր սրտի հատոր պինդ գրկախառնել է իւր վիշտը, այս անյաղթելի արիւնթիւնը՝ որ փակուելով և ամփոփուելով իւր անձի մէջ՝ ամենայն ինչ գտնել է ուզում միայն իւր մէջ վերջապէս կրքերի այս սաստկութիւնը և կրքերի վերայ այս տիրական իշխանութիւնը \*\*) — ահա ձեզ անգլխական բնաւորութեան և անգլխական դրականութեան յատուկ նշանները։

Նորա շուրջ, ինչպէս և նորա մէջ, ամենայն ինչ մեծութիւն է։ Դանտի նկարագրած դժոխքը՝ լոկ միայն չարչարանաց գործատուն է, ուր մինը միւսի վերայ կարգուած սենեակները՝ յարկ յարկ իջնում են աստիճանաբար դէպի վայր՝ մինչև ստորերկրեայ սանդարամետական աւազանը։ Իսկ Միլտոնի դժոխքը՝ միգապատ և անշրջահայելի է, «հաւաւոր բանտ, հրաբորբոք որպէս մի վառարան, բայց այդ բոցը լոյս չունի, այլ աւելի մթնշաղ խաւարութիւն է՝ ուր հազիւ աղօտաբար որոշել կարելի է բոլոր տարածութիւնը, այն է լոկ միայն անպատասցած տեսարանները, տրոմութեանց գաւառները, չարագոյժ աղջամուշղը», հրեղէն ծովերը, «սառնամանիք ցա-

\*) Այս է վայրն՝ ունը՝ մարդ, ասէ հրեշտակապետն կորստեան,  
Այս իցէ մեղ փոխանակ ընդ արփիայնոցն բնակութիւն,  
Այս խաւար տխրազգած երկնաւորի լուսոյն փոխան,  
Քաջ է, քանզի որ այժմս կոկոզեալն է Թագաւոր՝  
Տալ իշխան է պատուէր, արդարութեան կարգել սահման,  
Օ՞ն լաւ իցէ քաջ ի բաց անջրպետեալն առ ի նմանէ  
Որ անկուշեալ զոյգ իրաւանց՝ ըռնի նդւղեալ ել զընկերօքն,  
Ողջ մնաւորիք, դաշտք երանեալք, ուր խնդութիւն բնակէ յաւեժ,  
Ողջոյն ընդ ձեզ, արհաւիրք, ողջոյն՝ աշխարհդ անդնդային,  
Խորայեղձ և դու դժոխք՝ ընկալ զքո նոր տանուտէր,  
Սրտք զոր ոչ դրդուեցուցսն ժամք և տեղիք՝ բերէ նա քեզ,  
Ինքն միաքն անձին իւրում է սեփական տուն և տաճար,  
Զդժոխս յերկին փոխել, ղերկինս ի դժոխս յանձն իւր կարէ,  
Զի՞ փոյթ է ուր, մինչ նոյն եմ՝ միշտ՝ և զոր արժանն է ինձ լինել,  
Ամենայն ինչ, թէ և փոքր քան զոր շանթն մեծացոյց,  
Աստ գոնէ աղատ լիցուք, Ամենակալն զտեղիս զայս  
Ոչ առ խանդալ ինչ կառոյց, ոչ աստի զմեզ հալածեսցէ,  
Աստ կարող գոմք յանհոգ՝ յապահոյի Թագաւորել,  
Եւ ըստ իս, ի դժոխս անգամ իշխելն է ցանկալի,  
Լաւ ի դժոխս է տիրել, քան թէ ծառայ լինել յերկինս։

\*\*) Տես Ս. Գիւրբը։

մաքները՝ որ որոշակի կարկառում են իրանց սե ու վայրենական գծագրութիւններով, և անդադար ջարդում անդադար ծեծում են աղէտալի կարկառի մշտական փոթորկութիւններով, ուր այդ կարկառը բնաւ չի հալւում և լեռնային շեղջեր է կազմում, որոնք հնադարեան շինուածների աւերակի նմանութիւն են տալիս . . . Շանթի խանձոտած գլուխներով՝ հրեշտակները անհամար լէգէոններ են կազմում, և կարծես թէ դոքա « անտառներ են այն կաղնիներից կամ լեռնային շոճիներից կազմուած, որոնց փառահեղ՝ թէպէտ և մերկացած բները բոցակէզ ամպութեան միջից լուրձաբերձ գէպի վեր են ձգւում » \*), Միլտոնը հրապոյր է դրում գէպի ախտանշանը և անսահմանը, ուստի և նոյնը շոյալում է առատ ձեռքերով, նորա աչքը կշառնում է միայն այն ժամանակ, երբ որ իւր առաջ բացւում են անծայր տարածութիւններ, որ և իսկոյն ընկեցնում է հսկայական պատկերներով, Զոր օր. պսպէս է նկարագրուած սատանան՝ որ ծովային թուխ ալիքների միջից գլուխը վեր հանած կայծակնացայտ աչքերով նայում է, « նորա հուժկու հասակը նման էր Լեիաթան ծովահրէշին, որ ովկիանի յորձանքների մէջ յուզող բոլոր արարածների մէջ՝ Աստուծոյ մատով հաստատուել էր ամենից մեծպաղթ . . . Երբեմն եթէ այդ գաղանը ննջում է նորուեգիայի ափանց փրփուրից կոհակներում, պատահում է, որ ուշացած ղեկավարը իւր փանաքի նաւակը մերձեցնում է նորա կողմը և՛ որպէս նաւաստեաց զրոյցը պատմում է՝ նորան կղզու տեղ դնելով՝ խորիսխը մլխում է գաղանի թեփամորթ պատեանի մէջ, և նորա ահագին մէջքի հովանու տակ ապաստան է գտնում հողմի դէմ իւր անհաստատ նաւակի համար այնքան ժամանակ, մինչև որ գիշերը իւր աղջամղջով է փաթաթւում ծովային տարածութիւնները և ուշացնում է առաւօտեան ցանկալի լուսոյ գալուստը . \*\*):

\*) « Դղեակ ահաւոր շուրջանակի բոլորածոյլ, իրրու հն. ց մի ահագին հրաբորբոք բոցավառեալ. ոչ լոյս անդուստ ի բոցոյն, այլ մուգ՝ խաւար տեսանելի չուառութեանց սոսկ և եթ հանէ տիպիս յերեւան. գաւառ տրամութեանց և աղջամղջ հեծեծագին . . . ցամաք պաղեալ, վայրագ և խաւարչուտ, մշտակոծ ի մրկոյ ի փոթորկաց, յահեղ կարկտէ որ անհալ կայ ի գետին կարկառակոյտ լեռնահանդէս, նմանեալ աւերակաց վաղնջական ինչ շինուածոյ . . . Օրինակ իմն յորժամ հուր երկնից քշտէ զկաղնիս մայրեաց կամ զլերանց շոճ, խանձատեալ գլխովն բռնն ահեղակերպ, թէպէտ և մերկ, ի բոցակէզխարեալ ընջին յոտին կայ . .

\*\*) Ի կշիռ գայր սատանայ և նհանգին ծովականի

Որ մեծայաղթ յարարածս Դին ստեղծաւ Լեիաթան՝

Բան զբնաւս որ մխրձեալ լուղին ընդ հետս Ովկիանու . . .

Է յաճախ զի գաղանն ի նորուեգեան ննջէ փրփուրս,

Ղեկավար նաւակի մոլորիւոյ նդ խոր աղջամղջս

Ըջնու կղզեակ ինչ համարեալ, — զրոյցս պսպէս տան նաւաստիք, —

Սպէնսէրը ևս ունի հոյակապ նմանութիւններ, բայց նորա մտածութիւնները չեն կրում այն ողորդական կնիքը, ինչ որ դժոխքի գաղափարը բողոքականի խոհերի մէջ դրոշմում է։ Ոչ ոքի բանաստեղծական երեակայութիւնը չի կարող ստեղծիլ այնքան սոսկալի և ահաբեկեցիկ տեսարան, ինչ որ պատկերանում է սատանայի առաջ, երբ որ նա բանտից դուրս է գալիս։ Եւ ահա նորա առաջ բարձրանում են դժոխքի պարիսպները։ Մինչև ահա տանիքը ցցուած է ահագին պատը՝ երեք անգամ երեքպատիկ գոնները կրակ ու բողոք են բռնուած, որ ամենայն ելեմուտքը ապահով փակում է։ Բայց այրել չի կարող գոները։—Այն տեղ գոների երկու կողմը պահպան նստած էին երկու վիթխարի սոսկալի երեւոյթներ։ Նոցանից մէկը գեղեցիկ կին էր մինչև մէջքը, և յետոյ՝ անհանգիստ զազալի թեփամորթի լայն մանուածներ առած՝ գնում վերջանում էր վիշապի գլխով, որ մահաբեր խալթոցի զէնքով էր զինուած։ Նորա պորտի շուրջ պատրաստ կեցած էին դժոխային շներ, որոնք Կերբերոսի հագագի պես բերանները լայն բացած անլուխի հաջում էին և քստմնելի գոյժ ու կառաչ էին ունում։ Իսկ եթէ պատահմամբ խափանուէր նոցա աղաղակը, այն ժամանակ եթէ ուզենային՝ նոքա սողոսկելով մտնում էին իրանց ճիւղի փորը, որ նոցա համար իբրև մի շանաբուն էր, և այն տեղից կրկին հաջում, կրկին վնգստում էին, թէպէտ լսողի համար աներոյթ էին մնում։—Միւս տեսիլը՝ եթէ տեսիլ կը կոչուի մի բան՝ որ յայտնապէս ոչ անդամներ, ոչ յօգուածներ, ոչ ձև ունենալով՝ չի որոշում, թէ ինչ է նա . . . Գուցէ աւելի ճշդութեամբ արարած անուր պէտք է տանք այն բանին՝ ինչ որ ստուերի նմանութիւն էր միայն . . . Վերջապէս ինչ որ լինի՝ դա կեցած էր գիշերուայ պէս մոռալուտ, տասը Վշկապարիների \*) պէս՝ արիւնխախնձ, դժոխքի պէս՝ սոսկալի, և օգի մէջ ձօձում էր մի ահագին տէգ։ Նոցա այն անձն մասը, ինչ որ իբր թէ նորա գլուխը պէտք է լինէր, կրում էր արքայական թագի պէս մի բան։ Իսկ սատանան միշտ շեշտակի առաջ էր գնում, վեր կացաւ ճիւղը, որ նորան զիմաւորէ և այնպիսի զարհուրելի ոտիւններով՝ որ նորա ոտքի քայլափոխից դողաց դժոխքը, Աներկեան ոտիւնը ապշում էր՝ թէ ի՞նչ պէտք է լինի այն, ապշում էր, բայց սրտի մէջ ահ չէր զգում \* \*)։

Հարեալ զխաբիսին վարսէ ի թեփամորթ նորա պատեանս,

Աւ կողիւբ հանգչի նորուն, յայն ապաստան հողմոյն ընդդէմ,

Մինչ զծով պատէ գիշեր և յապաղէ զտենչալին այգ։

\*) Վշկապարի, կոպուդի, Եւֆրեյա կամ Դիֆֆի դոնոր (Փուրիա) — դժոխքի երեք դիցուհիներ են չարագործներին տանջելու համար, և նոցա անունները են՝ Ալեկտոն, Մեգերա, Տիսիփոնէ։

\*\*) Երևի հուսկ դժոխոց ծիր բարձրացեալ յահել կամարն, եւ երիցս երեքպատիկ յերիր պղնձի տախտակաց դուրք եւ յերից երկաթէից և յադամանդ երրեակ վիմէ

Ներքին խռովութեանց պատերազմների մէջ ծերացած զինուորի դիւ-  
ցազնական ոգին՝ սանդարամետի կռիւներին ևս ոգևորութիւն է տալիս,  
ուստի եթէ հարցնեն, թէ ինչո՞ւ Միլտոնի ստեղծուածները ուրիշներից ա-  
ւելի վսեմ են, պատասխան այն է, թէ որովհետև նորա հոգին բարձր է,  
քան ուրիշներինը:

Սորանով է բացատրւում նմանապէս և նորա պատկերների մէջ իշխող  
վսեմական բնաւորութիւնը: Արդեօք նորօրինակ կարծիք պիտի համարուի,  
եթէ ասելու լինիք, թէ նոքա՝ առաջինութեան դպրոց են: Սպէնսէրը նը-  
ման է ողորկ հայելուն, որ ցոլացնում է մեղմ և ամբիջ կերպարանքեր:  
Շէքսպիրը՝ կիզիչ ապական է նմանում, որ պրում է բաղմատեսակ պոյ-  
ծաւերանգ և վառ երևոյթներով: Մինը մեզ զուարճացնում՝ միւսը այէ-

Սառուցեալք անթափանցանց, պատնիշափակ պարունակեալք

Յանձախական ի հրատէն որ պաշարեալ պատի զնօքօք:

Անդ առ դուրսն աստի անտի նստին կրկին դէմք սոսկալիք:

Մին միջով չափ ի կին կերպարանեալ գեղապարտը,

Բայց զազիր ի թեփամորթ յաղթ անհեղեղ և լայն պատուածս

Երթայր յանգէր ի վիշապ՝ ի մահաբեր զինեալ խայթոց:

Զպորտով իւրով վոհմակ շանց դժոխոց անդուլ անհատ

Ի հաջիւն ահագին Կերութեանս խոր հագագացն

Հնչէին ահադնադորդ գոյժ և կառանչ քսածնելի:

Իսկ թէ յանկարծ խափանէր ինչ զնոսա յաղաղակէն,

Էր նոցա մտանել անդրէն ի սող ի ճուղան փորն՝

Երբ և կամ լինէր նոցա, և կալ դարձեալ անդ ողջասոյգ:

Բայց և անդ ևս հաջէին և ոռնային յաներևոյթս:

Միւս տեսիլն՝ եթէ տեսիլ օրէն իցէ զայն անուանել՝

Ում չէին ինչ յայտ անդամք, ոչ խաղալիք և ոչ յօդուածք,

Կամ թէ կոչել գոյացութիւն զստուերակերպ ինչ իցէ մարթ,—

Զի բերէր սա յանձին զերկաքանչիւր նմանութիւնս,—

Սեպտէմ էր զերդ գիշեր, մոլի քան զտասն կատաղիս,

Ահագին իբրև զգժոխս, և ճոճէր տեգ մի սոսկալի,

Կարծեցեալն իւր գլուխ կրէր զարքայական թագին տեսակ:

Գայր մերձենայր Սամայէլ, և ի նստոյն կանգնեալ ճուղանն

Ընթացաւ նոյնպէս հապճեպ՝ զարհուրելի՝ մըն սրնգելով:

Դողացան ի քայլափոխս ոտից նորին սանդարամէտք:

Հայեցաւ թշնամին անպարտելի՝ զարմանալօք

Թէ զի՞նչ իցէ. ափշութիւն կալաւ զնա, երկիւղ ինչ ոչ:

ծրփում է: Իսկ Միլտոնը վսեմացնում է մեզ, Նորա նկարագրած առարկաների զօրութիւնը անցնում է մեր երակների մէջ. նոցա վեհափառութեան հրապուրով՝ մենք ինքներս վերանում ենք հոգևով, ճիշդ այսպէս է ներգործում արարչագործութեան պատկերը՝ ինչպէս որ նա է նկարում: Երբ որ տեսնում ենք Իմաստութեան և Կամքի մեծ արարչութիւնը մեծ գործը՝ կարծես զգում ենք, թէ մեր հոգու զօրութիւնը և բարոյական առողջութիւնը ևս հետը առաւելանում է:

«Նորա կանգնած էին երկնային ունջի ափին և տեսնում էին անբաւ անդնդի անհունութիւնը՝ որ կարծես թէ կատաղի հողմերից հիմնադատակ տանկումբայ լինող մի ծով է՝ մոայլ, հրեշապեղ, խոպանացած, մրկայայտ, Նորա երեսի այնպիսի կոհակները կուտակում լեռնանում էին, ձգնում էին սփռիլ մինչև երկնքի բարձունքները, աշխատում էին բռնունքը պոկել իրանց տեղերից և խառնակել միջավայրը կենտրոնի հետ: Եւ ասաց այն ժամանակ ամենարար բանը. Լուս կացէք, ամբոխած ալիքներ, և դու անդունդ՝ խաղաղացիր, Լերիք է, վախճան եմ տալիս ձեր խռովութեան:

—Թող լինի լոյսը, — ասաց Աստուած. և անդնդից յանկարծուստ իսկոյն ծագեց արփիական լոյսը, վճիտ բնութեան սկզբունքը, տարերքի մէջ առաջին տարրը, որ և յետոյ ճառագայթաճաճանչ ամպի ձևով գնտացաւ ծրարուեցաւ և մայր արեւլքից ծագելով սկսեց օգային խաւարութիւնների մէջ շողերով կաթել:

—Երկիրը կազմուեցաւ, բայց դեռ խակ սաղմի պէս՝ որպէս թէ մաշկի մէջ ամփոփուած՝ աներեւոյթ էր խոր ջրերի արգանդում: Նորան ամենայն կողմերից շրջապատում էր լայնատարած մեծաշարժուն ովկիանը: Իւր ջերմ ծննդագործ խոնաւութեան տամկութեամբ կակղացնելով երկրի գունտը՝ խմորում էր նա ամենածին մօրը, որպէս զի կենդանական հիւթերով թրմած՝ սկսե յղանալ: Եւ ասաց այն ժամանակ Աստուած մի տեղ ժողովեցէք դուք, հաստատութեան ներքոյ ցրուած ջրեր, և թող ցամաքը երևան գայ: — Եւ ահա իսկոյն յաղթահասակ լեռները ջրի տակից իրանց գլուխները հանեցին մինչև երկնք ձգտելով իրանց լայն ու մերկ թիկունքները մինչև ամպերը բարձրացուցին: Եւ որքան վեր գնացին կոհակաց բլուրները, այնքան վայր իջաւ դատարկ խոր, լայն և ջրամբար փոսը: Եւ ահա ջրերի թաւալգլոր սահանքները ուրախ և արագ արագ սկսեցին վիժել այդ ծոցի մէջ, ինչպէս երաշտութեան փոշու մէջ ցրուած կաթիլները՝ երբ որ նորա շտապում են բոլորականութեան ձեւ ստանալ: ( \* )

\* ) Կացեալ յերկնիցն յատակի՝ տիսին յափնէն զանդունդս անբաւ  
Ծովածուփ խրթին խանգար վայրեններես և հիմնախիչ  
Ի մրկաց մոլորեցելոց, յալեաց ուռոյց լեռնակուտակ  
Պոհակեալ ի պատ առնուլ և պաշարել զերկնից բարձունս,  
Եւ խառնել կորուսանել զմիջավայրն ընդ դմբէթին: —

Ահա նախագոյակ տեսարաններ — անշրջաճայելի ծովեր, լերկ ապառաժներ — որոնց նմանները Ռափայէլը նկարում է իւր սրբազնապարական պատկերների հեռանկար խորութեան ստուերներում: Միլտոն լմբւում է ընդհանրականը և շարժում է հսկայաձև զանգուածները այնպէս գիւրին և զառ կերպով, ինչպէս և իւր Եահուէն:

Թողնենք այս գերբնական կամ ուրուամտեօիլ պատկերները: Արեգակի մայր մտնելը՝ այս հանապազօրեայ հասարակ տեսարանը՝ ոչինչ նուազ սքանչելի է քան առաջինները: Միլտոնը այդ տեսարանը զարդարում է մեծաշուք պլաշանութիւններով և արքայաշուք կերպարանութեամբ, այնպէս որ այժմ վեսեմականը բոլորում է աւելի քանաստեղծի անձնական յատուկ բնութիւնից: մինչդեռ առաջ բոլորում էր նոյն իսկ նիւթի բարձր վեհափառութիւնից: Արեգակը խոնարհում էր, Ոսկի և ծիրանի շաղ եկան ամպերի վերայ՝ որոնք խուճալ խուճալ շարուած՝ մայր մուտքի աթոռի շուրջ՝ սպասում էին նորա գալուտեան: Ահա սխուեցաւ երեկոն և աղօտ լոյսը սփռեց իւր նսեմ բողբոջ ամենայն արարածի երեսին: Նորա հետեւից շտապով գալիս էր լուութիւնը՝ դադան և թռչուն քաշուեցան հանգստանալու՝ ոմանք դալարի խշտինքում, ոմանք իւրեանց բներում: միայն սոխակը բոլոր գիշեր անքուն էր մնում և գեղգեղում էր իւր սիրտտարի դայլայիկը, այն ինչ հրաշագած անդորրութիւնը մնջիկ ուշ էր դնում: Բայց երկնային կամարում էլ շուտով վառուեցան

Լուս լերո՛ւք կոծեալ ալիք , խաղաղացիր՝ անդունդք և դու , —

Ասաց բանն ամենարար , — կարեկցարուք ի խեռելոյթ : —

Լիցի լոյս , — ասաց Աստուած . նոյնհետայն լոյսն արփիաճեմ

Նախասկիզբն էից վճիտ բնութիւն՝ ծագեաց ի յանդնդոց ,

Եւ ելեալ յարեւելից իւր խանձարոցն էառ գնալ

Ընդ մեայլն օդատեսակ , յամպ գնտաձև ծրարեալ փայլուն :

Ըստեղծեալ կայր երկիր , բայց խակակութ սաղմիմն դեռ՝

Ի խորոց ջուրցն անդնդոց ծրարեալ յարգանդ աներեղոյթ .

Ովկիան յերեսս երկրի լի ծաւալէր՝ ոչ պարապորդ ,

Զի ծննդագործ և ջերմահոտ խոնաւութեան տամկութեամբ

Զգունդ երկրի կակղեալ յեռանդն ածեր զմայրն հասարակաց ,

Զի թրմեալ ի կենագործ հիւթ նայական՝ առցէ յղենալ :

Անդ յայնժամ՝ ասաց Աստուած . — Որ ի ներքոյ երկնիցդ ջուրք՝

Ժողովեսցին ի մի վայր , տարրն ցամաք ելցէ ի վեր : —

Նոյնժամայն երեւալ յառնեն լերինք յաղթահասակք ,

Ուրք և թիկունք նոցին լերկ և ապալերկ կուտակեալ յամպս :

Եւ գլուխք նոցուն կանգնեալ բարձրայօժակ մինչև յերկինս :

Որչափ ի վեր ամբարձան կոհակեալ բլուրք , նոյն ի խոնարհ

Գոգացաւ ի ծոց խորափոր և լայնարձակ , ջրամբար մեծ ,

Յոր զեռան խայտալից վիժեալ սահանք թաւալաղլոր ,

Իբրև շիթք ի փոշուղ երաշտութեամբն ոլոռնացեալք :

անապական շափիղաների ճրագները: Աստեղային բանակների առաջնորդ Աբուսահեդը\*) նոցա մէջ փայլում էր ամէնից աւելի, մինչև որ գիշերուայ դշխոյ՝ կուսական լուսինը՝ ամպերի միջից իւր ամենայն փառքով դուրս չեւաւ և իւր ամենաջինջ պայծառութեամբ չը խաւարացրեց միւս բոլոր լոյսերը որ ինքը ամենայն աշխարհը ծածկեց իւր արծաթաշող շղաշով:\*\*)

Լուսոյ բաղմատեսակ փոփոխութիւնները կարծես թէ այս տեղ կազմել են մի շրջածուցիկ թափօր, որ հոգու մէջ սփռում է բարեպաշտական սքանչութիւն: Սուրբ աղբեցութեամբ հովանաւորած՝ բանաստեղծը աղօթում է: Ագամ և Եւայի ամուսնական որորոցի առաջև կեցած նա ողջունում է «ամուսնական սէրը, խորհրդեան օրէնքը, մարդկային ազգի ճշմարիտ աղբիւրը, որ անառակ պղծութիւնը մահկանացուներից արտաքսեց և պնտհետեւ միայն անասնոց երամակի բաժին մնալու թողեց, որ հայրական, որդիական և եղբայրական սիրոյ սկզբունքը՝ ազգակցութեան ամենազնիւ, արդար, մաքուր և արժանաւոր սկզբունքը՝ հաստատեց բանական հիմունքների վերայ»:\*\*\*) Նա նուիրագործում է ամուսնական առաքանտը սրբոց և հայբապետաց պատուէրներով: Նա ցոյց է տալիս թէ նորա յանդիման ինչ աղտոտ ապականութիւն են դրամագնով պատրուակած սէրը, թնթեւագնաց կապակ-

\*) Գիշերավար աստղը, Վեսպետ:

\*\*) Արդ երեկոյն խաղաղասիք տակաւ դալով դեռ ևս գայր, եւ իւր լուրթն աղօտալոյս զտարերս ի զգօնն համակեր թոյր, Ընկեր էր իւր լուրթին, երունք և հաւք մեկնեալ կային՝ Ի կանաչ նոքա խշտիս մորեաց իւրեանց, սոքա ի բոյնս: Ծիծեռնիկ և եթ ընկեր՝ գեղգեղելով զգիշերն ի բուն Ջրայլայլիկսն սիրայինս, զուարճացեալ կայր լուրթին: Նոյնժամայն ի կենդանի շափիղս երկինք շողողեցան: Գիշերավարն որ ածեր զաստղականառ բանակաց բոլսն՝ Ընթանայր բոլորափայլ, մինչ ամպաշուք ծագեալ լուսին Թամբին յայտնատեսիլ՝ զանհամեմատ լոյսն հոլանեաց, Ըզշղաշն արծաթափայլ արկեալ ի ստուերսն խաւարի:

\*\*\*): Ուրախ լիւր, Սէր հարսնագեղ, խորհրդական օրէնք և կարգ, Սիւն աղբիւր սերնդոցս մարդկայնոյ, ստացուած յատուկ Ի զրախտին՝ ուր ամենայն հասարակաց էին բարիք, Քե յօսնական վարար մուլուքք հալածեցան ի մարդկանէ Տարագիր վտարանգեալք ի պաճարացն անասուն ջովս, Քե հիմնեալ ի մտերմութիւն սուրբ և արդար սիրոյն կապանք, Եւ հօր, որդւոյ և եղբօր ապաղատանք գորովագութ Ի լոյս և ի ծանօթս եկին անդէն նախ զառաջինն:

ցութիւնները, լիտի կանայք և վարձկան աղջկունք\*) Զարմանալի է, որ այսպէս ամենայն բան փոխուել է Շէքսպիրի ժամանակից յետոյ, և ինչպէս պայծառ կերպով արտայայտուած է նոր գրականութեան և նոր դարագլխի օկիգրը՝ երբ որ գովասանքներ է լսուում ի պատիւ ամուսնութեան, օրինական սիրոյ, ընտանի սէր ուրախութեանց, բարեպաշտ խստութեան և ռեզլիական հոմ—ի (տան, օճախի)։

Զարմանալի էր փոփոխութիւնը, բայց զարմանալի էր և այս մեծ մարդը, Երգէն ի ծնէ միշտ ձգտում էր միայն դէպի ազնուականը, իսկ ապա այդ բնադրական պահանջը նորա մէջ աւելի խոր արմատներ ձգեց, քանի որ նա միշտ և միշտ իւր խորհուրդների մէջ առանձնանում էր իւր ընդարձակ հրամութիւններով և խիստ արամաբանութեամբ, այնպէս որ՝ վերջապէս իւր համար ստեղծեց այնպիսի կանոնների և համոզմանց գրութիւն, որ ոչ մի փորձութիւնից չէր կարող տկարանալ և ոչ մի անյաջողութիւնից չէր կարող խախտուել։ Այս պաշարով կեանքի մէջ նա հանդիսանում է զանազան հանգամանքներում՝ երբեմն իբրեւ բանաստեղծ, երբեմն իբրեւ մարտնչող, երբեմն իւր արիական քաջագործութիւններով, երբեմն շլացուցիչ ցնորքներով, երբեմն իբրեւ դիւցազն, երբեմն իբրեւ անդրդուելի պուրիտանական, երբեմն երազայոյզ և մոլեգին, երբեմն վեհանձն և անխռով—մի խօսքով ինչպէս ամենայն նրբախնդիր՝ որ իւր անձի մէջ քաշուած ապրում է, ինչպէս ամենայն յափշտակուող՝ որ չի խրատուում փորձերից և միայն գեղեցկութիւն է սիրում։ Յեղափոխութեան անակնունելի դիպուածներով քաղաքական և աստուածաբանական յորձանքի մէջ մղուած՝ նա սկսեց ուրիշների համար պահանջել այն ազատութիւնը՝ որ կարօտութիւն էր դառել իւր հզօր մտքի համար, և ի վայր խորտակում էր հասարակական այն պատուարները՝ որոնք շղթայում էին նորա անձի եռանդայոյզ ձգտումները։ Մտաւոր ուժով՝ ոչ դե նորա չափ գիտութիւն ձեւը բերել չի կարող, յափշտակութեան ուժով՝ ոչ դե նորա չափ ատելութիւն զգալ չի կարող։ Այսպիսի զէնքով նա խառնում է աստուածաբանական վեճերի մէջ բարբարոսական դարու ամենայն մոլեռանդութեամբ և անտարբերութեամբ, բայց նորա անպարտելի արամաբանութիւնը կարողանում է վիճելի խնդիրները լուսաբանել լիակատար բացատրութիւններով և մինչև ի վերջը նկարագիր ոճ պահպանել անօրինակ մեծավայելչութեամբ։ Սքանչացած երևակայութիւնը՝ ար-

4) Սուրբ և հայրապետք անարատ և պարկեշտ քարոզեցիկ մահիճն . . . 2իբ ի ժմիս վարձկան բողոքի, ի հասեխած չիբ վայելան, ոչ յալքունեացն սիրուհիս, ոչ ի խառն կաբաւս, ոչ ի խենեշ խաբեբայ դիմակս, ոչ ի մէջ գիշերի պար, ոչ ի ցայգերգս տուփոտի զոր նուագէ անսուաղ առ տարփածսն իւր գեղապանծ, զոր լաւ ևս էր՝ ընդ վայր թէ հարկանէր քամահաբար։

ձակ գրութեան մէջ առատապէս շուշլելով բարձրաարգրութեան բոլոր ընտիր ձևերը՝ հետզհետէ սաստկութեամբ բորբոքում է նորա կրքերը և պնդիսի մոլի կամ վսեմ տաղերգութեան է հասցնում, որ կարծես թէ լսում ենք կամ երգուեալ վրէժխնդրի և կամ երկրպագու հրեշտակապետի բարբառը։ Մինչև յեղափոխութեան սկսուիլը՝ այն ինչ հազիւ պատահաբար զերծ մընաց արքայական գահը վտանգներից և աւելի ևս պատահաբար վերականգնեցաւ նոյն այդ գահը—նա ցնծութեամբ գրում է հեթանոսական բարոյական բանաստեղծութիւն, իսկ յեղափոխութիւնից յետոյ—քրիստոնէական բարոյական բանաստեղծութիւն։ Թէ մէկով և թէ միւսով նա փնտռում է վսեմականը և հիացումն է ազդում, վասն զի վսեմականը՝ ցնծացած մըտքի արգասիք է, իսկ հիացումը՝ մտքի ցնծութիւն է։ Թէ մէկով և թէ միւսով նա կարողացաւ յաջողապէս ի կատար ածել իւր մտադրութիւնը, ուր տեսնում ենք պայծառ երանգների զարմանալի առատութիւն, բանաստեղծական նուագութեան անստիճիւր կատարելութիւն, այլաբանութեանց հոյակապութիւն, զգացմանց վեհութիւն, դիցազնական յոյզերի և անհունութեան նկարագիր։ Առաջին մէջ հանդէս է գալիս նա որպէս քնարերգակ փիլիսոփայ, որի մէջ բանաստեղծական ազատութիւնը շատ ընդարձակ է, որի ստեղծաբանած հրաշական տեսապատրանքները խիստ մեծ ջոժ ունին, և որ արտագրում է գրեթէ միշտ կատարեալ տաղերգութիւններ և խմբերգութիւններ։ Երկրորդում ներկայանում է որպէս վիպական երգիչ և բողոքական, որ կաշկանդուած է անսխալական աստուածաբանութեամբ, որ կորուսել է ոճի կորուվութիւն և անկարող է գերբնականը իմանալի կացուցանել, որ բանագործական բնազդումից զուրկ մնալով՝ յաջողութիւն չի ըստանում ստեղծել կենդանակերպ հոգիներ, այլ կուտակում է ցուրտ քննախօսութիւններ, մարդուն և Աստծուն դարձնում է ուղղադաւան արձաններ և մեքենաներ,—բայց և այնպէս կրկին ոգեւորութիւն է առնում բարձր բանաստեղծական աւելում՝ երբ որ սատանայի պատկերի մէջ նկարագրում է իւր սեպհական ժողովրդապետական հոգին, երբ որ նկարում է ահեղահրաշ տեսարաններ և վիթխարի հրեշներ, երբ որ իւր բանաստեղծութիւնը նուիրում է կրօն և պարտիք ներբողելու և փառաբանելու համար։

Բախտը բերեց նորան դրեց երկու դարագլուխների միջասահմանում, իսկ նա երկուսիցն էլ քաղեց նոցա յատուկ խմորը, ինչպէս այն գետը՝ որ երկու զանազան խաւերի միջից հոսելով իւր ջրերը ներկում է և մէկի և միւսի գոյներով, նա՝ որ բանաստեղծ և բողոքական էր իւր բնութեամբ՝ մայր մօնող դարագլխից ժառանգեց բանաստեղծական ոգեւորութեան ազատութիւնը, իսկ նորածին դարաշրջանից՝ քաղաքական կրօնի խստութիւնը։ Առաջինը նա գործ դրեց ի սպասաւորութիւն երկրորդի և նոր բնաբանների մասին երգել սկսեց առաջուայ ժամանակների ոգեւորութեամբ։ Նորա երկասիրութեանց մէջ դուք կը ճանաչէք երկու Անգլիա. մին՝ որ գեղեցկութեան մոլեգին պաշտող է, որ անպուսպ զգայաբիրութեան մղումների գերի

և զուտ երեւակայական ուրուառեսիւնների անձնատուր է, որ ուրիշ կանոն չի ճանաչում՝ քան բնական գրգիռներն ու ազդումները, ուրիշ կրօն չի դաւանում՝ քան բնական միամիտ հաւատը, որ յօժարամիտ հեթանոսական է. իսկ յաճախ՝ նա և անբարոյական. մի խօսքով այն Անգլիան՝ ինչպէս որ նկարագրել են Բէն - Ջոնսօն, Բոմին, Ֆլետչեր, Շէքսպիր, Սպենսեր և միւս բազմաթիւ բանաստեղծների փաղանգը՝ որ այդ հողի վերայ է ընթացել յընթացս յիսուն ամաց. միւս՝ որ գործնական կրօնի հիմքը ձգեց, թափուր էր բնազանցական կարողութիւնից, հոգով ու մարմնով ընկղմած էր քաղաքացիական լինդիքներում, կարգասէր էր և հակամէտ էր աւելի չափաւոր՝ առողջադատ՝ հանրագուտ՝ նեղ կարծիքների. որ գովում է ընտանեկան առաքինութիւնները, զինուել է բարոյական խստապատուէր խըրատներով և կաշկանդուել այդ խրատների մէջ, որ իւր նուիրական զբաղմունք է դարձուցել վերին աստիճան զօրութեան, ճոխութեան և ազատութեան հասուցած՝ արձակ շարադրութիւնը, Միլտոնի շարադրութեանց ոճը և գաղափարները պէտք է համարուին գրականական յիշատակարաններ. նոցա մէջ ամփոփուած է անցեալը, նոքա կանխում են ապագան. այնպէս որ այդ մի երկասիրութեան մէջ կարելի է կարգալ շատ դարերի և ամբողջ ազգի կրած վիճակներն ու զգացումները:

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ

Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Մակար Սրբազնապետին Կաթողիկոս ամենայն Հայոց բարեհաճեցաւ ամսոյս 16-ին Բիւրականի ամարանոցից վերադառնալ ի Ս. Էմմաճին երեկոյեան ժամից յետոյ:

Բարեպաշտուհի տիկին Եւայ Յարութիւնեան Մանուէլեանց Բագուեցի նուիրել է մի հարիւր բուբլի Մայր Տաճարի վերանորոգութեան ի յիշատակ իւր ամուսին Գրիգորի:

## ՊԱՅՏՈՆԱԿԱՆԲ

Յուլիս 1 Ս. Սինօդն հիմնուելով Վրաստանի և Իմէրէթի Հայոց վիճակային Կոնսիստորիայի յայտարարութեան վերայ համար 6469 ի 26 Դեկ. 1887 ամի, թոյլատրեց նմին գործադրել իւր որոշումն, այն է Ախալցխայ քաղաքի Ս. Վարդանանց եկեղեցւոյ նախկին երեցփոխան Աղէքսանդրն Բօրակչեան ենթարկել քաղաքական դատարանի, և պահանջել նորանից եկեղեցւոյ հաշիւն և գոյքն որ զլանում է յանձնել նորոգ երեցփոխանին: